ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

21 հունվարի 2019 թվականի N 15-Ա

«ԴԱՎԻԹ ՓԱՐԵՄՈՒԶՅԱՆ» ԱՁ-Ի ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՎԱՍՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 55-րդ, 56-րդ և 57-րդ հոդվածներով, հիմք ընդունելով հանքավայրի շահագործման փոփոխված նախագծի 2018 թվականի սեպտեմբերի 26-ի Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության» թիվ ԲՓ 80 և 2018 թվականի հուլիսի 02-ի Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության՝ «Արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության» N 1581 փորձաքննությունների դրական եզրակացությունները, հաշվի առնելով «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի 2018 թվականի մայիսի 17-ի թիվ Ֆ-171/18 գրությունը, «Դավիթ Փարեմուզյան» ԱՁ-ի 2018 թվականի փետրվարի 23-ի թիվ 7, մարտի 02-ի թիվ 8, մայիսի 05-ի թիվ Դ-03 գրությունները և Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «Դավիթ Փարեմուզյան» ԱՁ-ի (այսուհետ՝ ԱՁ)՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բորբորթի դիաբազային պորֆիրիտների հանքավայրի Քարալանջ տեղամասում արդյունահանման աշխատանքներ կատարելու 2012 թվականի նոյեմբերի 22-ի օգտակար հանածոյի արդյունահանման թիվ ՇԱԹՎ-29/133 թույլտվությունում կատարել հետևյալ փոփոխությունները՝

- թույլտվության գործողության ժամկետը սահմանել մինչև 2068 թվականի մայիսի 5-ը,
- հանքի տարեկան արտադրողականությունը սահմանել 4700մ³ արդյունահանվող պաշար,
- տրամադրվող պաշարների քանակը՝ 258206 մ³ ըստ C_1 կարգի,
- Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բորբորթի դիաբազային պորֆիրիտների հանքավայրի Քարալանջ տեղամասի արդյունահանման նպատակով տրամադրված կոորդինատային համակարգի՝ 1.X=4523363 Y=8477873 H=2164.0 h(-14,8), 2.X=4523386 Y=8477841 H=2164.0 h(-14,8), 3.X=4523406 Y=8477863 H=2154.0 h(-5.0), 4.X=4523376 Y=8477887 H=2157.5 h(-5.0) կոորդինատներով սահմանափակված տարածքը ընդլայնել և ընկերությանը տրամադրել՝ 1.X=4523015 Y=8478025, 2.X=4523082 Y=8477964, 3.X=4523153 Y=8477911, 4.X=4523218 Y=8477974, 5.X=4523073 Y=8478091 (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով սահմանափակված տարածք և լեռնահատկացման թիվ ԼՎ-133 լեռնահատկացման ակտի՝ 1. X=4523357 Y=8477874 H=2166.0(h=-17.0), 2.X=4523386 Y=8477832 H=2166.0(h=-17.0), 3.X=4523410 Y=8477860 H=2154.0(h=-5.0), 4.X=4523373

Y=8477892 H=2158.0(h=-9.0) կոորդինատները փոխարինել՝ 1.X=4523015 Y=8478025 H=2208 h=0, 2.X=4523082 Y=8477964 H=2136 h=0, 3.X=4523153 Y=8477911 H=2196 h=0, 4.X=4523218 Y=8477974 H=2160 h=0, 5.X=4523227 Y=8477973 H=2158 h=0, 6.X=4523235 Y=8477986 H=2155 h=0, 7.X=4523216 Y=8478014 H=2140 h=0, 8.X=4523195 Y=8478023 H=2140 h=0, 9.X=4523163 Y=8478050 H=2136 h=0, 10.X=4523126 Y=8478100 H=2140 h=0, 11.X=4523100 Y=8478098 H=2148 h=0, 12.X=4523073 Y=8478091 H=2150 h=0,13.X=4523015 Y=8478025 H=2208 h=0 (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով:

2.Կատարել փոփոխություն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բորբորթի դիաբազային պորֆիրիտների հանքավայրի Քարալանջ տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ ՊՎ-133 պայմանագրում (այսուհետ՝ պայմանագիր):

3. Ընդերքի գործակալության պետին՝

1)օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքում փոփոխություն կատարելու դիմումը բավարարելու վերաբերյալ ծանուցել դիմումատուին և հրավիրել վերջինիս՝ 10-օրյա ժամկետում պայմանագրի փոփոխությունն իր կողմից վավերացնելու (ստորագրելու և կնքելու) համար,

2)ընկերության կողմից պայմանագրում կատարված փոփոխությունը վավերացվելուց (ստորագրելուց և կնքելուց) հետո 10-օրյա ժամկետում վերջինիս տրամադրել օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության, ընդերքօգտագործման պայմանագրի, լեռնահատկացման ակտի փոփոխված տարբերակները,

3)ծանուցել ԱՁ-ին, որ սահմանված ժամկետներում պայմանագրի փոփոխությունը չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փոփոխությունների փաթեթը չստանալու դեպքում, սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած,

4)ապահովել համապատասխան գրառումների կատարումը օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

5.«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթը ստանալուց հետո, եռօրյա ժամկետում կատարել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումները:

6.Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

7.Զեղյալ ճանաչել Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 08.06.2015թ. թիվ 226-Ա հրամանը:

8.Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Վարդան Գևորգյանին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

1/21/2019

X

VERIFIED OCSP 21-Jan-19 10:52:38 GMT+4

Signed by: BAGHRAMYAN GAREGIN 3207770118